

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանը հայտարարում է քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու մասին

ՀՀ Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի գլխավոր մասնագետի (65-2.3-40) ժամանակավոր թափուր պաշտոն

Բաժնի գլխավոր մասնագետը՝

կազմակերպում է պետական առողջապահական ծրագրերի իրականացումը Մարզում, մարզային ենթակայության պետական առողջապահական հաստատությունների աշխատանքը, օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպում է բնակչության անվճար բուժօգնության իրականացումը, վերահսկում է ոչ պետական առողջապահական հաստատությունների գործունեության համապատասխանությունը օրենսդրությանը, կազմակերպում է մարզի տարածքում վարակիչ և սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների դինամիկայի ուսումնասիրությունների ու վերլուծությունների կատարման, դրանց կանխարգելման ծրագրերի մշակման աշխատանքները, կազմակերպում է Մարզի տարածքում հակահամաճարակային և կարանտինային միջոցառումները, պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության մարմիններին՝ բնակավայրերի ջրամատակարարման աղբյուրների, բնակելի շենքերի, դպրոցների և այլ օբյեկտների սանիտարական վիճակի նկատմամբ վերահսկողության աշխատանքները, իրականացնում է մարզային ենթակայության առողջապահական կազմակերպությունների գործունեության ուսումնասիրությունների ու վերլուծությունների կազմակերպման գործընթացը, կազմակերպում է Մարզում ծննդօգնության պետական հավաստագրերով բժշկական ծառայությունների իրականացման գործընթացը, կազմակերպում է Մարզի բնակչության առողջության առաջնային պահպանմանն ուղղված իմունոկանխարգելման ծրագրերի համալիր աշխատանքների կատարումը, կազմակերպում է Մարզի տարածքում առողջապահական հիմնարկների՝ ՀՀ ԱՆ-ի կողմից կենտրոնացված գնումներով և հումանիտար օգնության կարգով հատկացված դեղամիջոցների, բժշկական նշանակության ապրանքների բաշխման, ներմարզային վերաբաշխման աշխատանքները, կազմակերպում է մոր և մանկան առողջության պահպանման ծառայության գործընթացը Մարզում, իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է

«առողջապահություն» մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն երկրորդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ, կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ  
-անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների եւ ունակությունների տիրապետում

-Դիմող ՀՀ քաղաքացիները Լոռու Մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

-գրավոր դիմում (լրացվում է տեղում՝ փաստաթղթերը ներկայացնելիս)

-կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները,

աշխատանքային գրքույկի պատճենը՝ բնօրինակի հետ միասին,

-արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք

մեկ գունավոր լուսանկար՝ 3X4 սմ չափսի

անձնագրի պատճենը

Պայմանագրի գործողության ժամկետն է՝ մինչև օրենքով սահմանված կարգով մրցույթի անցկացումը:

Աշխատավարձի չափը՝ 212309 ՀՀ դրամ:

Փաստաթղթերն ընդունվում են՝ 18.06.2019թ.-ից ժ.9.<sup>30</sup>- 12.<sup>30</sup>

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 20.06.2019թ.ժամը12.30-ը:

ՀՀ Լոռու մարզպետարանում ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար կարող եք դիմել ՀՀ Լոռու մարզպետարան (ք. Վանաձոր, Հայքի հրապարակ, հեռ.2-10-24)